

ՈՒՇԱԳՐԱՎ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ

Բանալի բառեր – Լազարյանների արխիվ, ճեմարան, կանոնագիրք, անվճար ուսուցում, չափորոշիչներ, ընդհանուր կրթություն, գիտելիքների ստուգում

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանում Լազարյանների արխիվի թղթապանակներից մեկի (թիվ 108, գործ 96) ուսումնասիրության ժամանակ մեր ուշադրությունը գրավեց միաժամանակ հայերեն և ռուսերեն՝ «Կանոնք Վասն ընդունելոյ Ձրիավարժ որդեգիրքը ի Լազարեան ճեմարանի Արեվելեան լեզուայ / Правила о приеме бесплатных воспитанников в Лазаревский институт восточных языков» գրքուկը, որտեղ հստակ ներկայացված են այն չափանիշները, որոնցով առաջնորդվել է Լազարյան ճեմարանի ղեկավարությունը:

Կանոնակարգի ներածականում Լազարյան ճեմարանի ղեկավարությունը անհրաժեշտ է համարում տեղեկացնել Ռուսաստանում ապրող բոլոր հայերին, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ հաստատությունում կրթություն ստանալու համար:

Լազարյան ճեմարանում անվճար ուսուցմամբ սովորելու համար առաջին հերթին հաշվի էին առնվում ոչ թե ուսանողի ծնողների զբաղեցրած դիրքը կամ պաշտոնը, այլ ուսման ծարավ երիտասարդներով ճեմարանը համալրելը: Այն է՝ միայն սոցիալական վիճակը բավարար չէր ճեմարանում անվճար ուսանելու համար: Կարևոր էր, որ առաջին դասարան ընդունվողները տիրապետեին նվազագույնը հետևյալ գիտելիքներին. կրոնից՝ կարևորագույն աղոթքներին, հավատո Հանգանակին, ինչպես նաև կարդալ և գրել իմանային հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն, տեղյակ լինեին թվաբանական չորս գործողություններին:

Կանոնագրքում հատկապես մեր ուշադրությունը գրավեց քննական հանձնաժողովներին վերաբերող բաժինը: Այն, որ Լազարյան ճեմարանում քննական գործընթացին մեծ ուշադրություն է դարձվել, երևում է ընդունող հանձնաժողովները գլխավորող մարդկանց անուններից, որոնք հայագիտության ասպարեզում հայտնի դեմքեր էին: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է, որ Լազարյան ճեմարանը նախակրթարանից սկսած մեծ տեղ է հատկացրել ընդունելության կազմակերպմանը, որպեսզի ճեմարանի սան դառնան բացառապես գիտելիքների տիրապետող և ուշիմ աշակերտներ: Այսպես՝ Աստվածաշնչին վերաբերող տեղեկությունների իմացության

ստուգումը կատարում էր Մսեր Մսերյանցը: Հայոց լեզվի գիտելիքների ստուգման պատասխանատվությունը դրվել էր Մկրտիչ Էմինի վրա: Մեկ այլ ուշագրավ հանգամանք էր, որ ուսերենի գիտելիքները խորացնելու համար սովորողներին առաջարկվել են Մմիոնովի հեղինակությամբ ռուսաց լեզվի դասագրքերը, որոնք պարտադիր են եղել նաև տեղի ռուսական դպրոցների համար: Փաստորեն, Լազարյան ճեմարանի առաջինից երրորդ դասարանների սաները պետք է ուսանեին ռուսական դպրոցների սովորողների համար նախատեսված դասագրքերով: Այսինքն՝ որևէ տարբերություն չի դրվել ռուսական դպրոցների աշակերտների և Լազարյան ճեմարանում ուսանողների միջև, թեպետ ուսերենը նրանց համար մայրենի լեզու չէր: Ճիշտ է, այս հանգամանքը գուցե և զաղութատիրական երանգ ունի, սակայն քանի որ Արևելյան Հայաստանը փաստացի գտնվում էր Ռուսական կայսրության կազմում, ուստի ուսերենի իմացությունը բավականին օգտակար կլիներ նրանց հետագա ծառայության ընթացքում: Չմոռանանք նաև, որ ուսերենի թույլ իմացությունը կամ գրեթե անտեղյակությունը հայ բնակչության համար շատ խնդիրներ է ստեղծել, իսկ ռուս պաշտոնյաները ճարպկորեն օգտագործել են այդ հանգամանքը ի վնաս հայերի:

Նույն կերպ թվաբանությունը ուսանելիս Լազարյան ճեմարանի սովորողները պետք է առաջնորդվեին ռուսական դպրոցների առաջին-երկրորդ դասարանների համար նախատեսված Բուսսեյի, երրորդ դասարանում՝ Պերևոզչիկովի հեղինակած դասագրքերով: Փաստորեն, այստեղ ևս տարբերություն չի դրվել հայկական և ռուսական կրթություն ստացող աշակերտների միջև: Ավելին, այս սկզբունքն էր գործում նաև երկրաչափության, պատմության և ֆրանսերենի դասավանդման պարագայում, որտեղ ևս օգտագործվում էին ժամանակի հայտնի մասնագետների հեղինակած դասագրքերը: Ավելացնենք նաև, որ Լազարյան ճեմարանի սովորողների համար նախատեսված այս կանոնները պարտադիր էին բոլոր ազգությունների երեխաների համար: Այդ նկատառումներից ելնելով՝ Լազարյան ճեմարանի ղեկավարությունը սերտ համագործակցում էր Թիֆլիսի, Երևանի, Էջմիածնի, ինչպես նաև Ռուսաստանի հայաշատ քաղաքներ՝ Նոր-Նախիջևանի, Թեոդոսիայի, Աստրախանի և մյուս վայրերում գործող հայկական ուսումնարանների հետ, խնդրում, որ դիմորդները նախապես իրագեկ լինեն ճեմարանի կանոններին:

Կանոնագրքում հստակ պարտավորություններ էին սահմանված նաև ծնողների համար, որոնք ճեմարանի ընդունելության կանոններում ներկայացված էին առանձին հոդվածներով: Ի դեպ, սովորողների ընդունելության համար պարտադիր պայման էր նաև Մոսկվայում ապրող և իրենց համար երաշխավոր հանդիսացող ազգականի կամ բարեկամի առկայությունը: Եվ, վերջապես, սաների համար ևս մեկ սահմանափակում գոյություն ուներ. այն ուսանողները, ովքեր տարբեր պատճառներով ի վիճակի չեն եղել ավարտել ուսուցման ամբողջական դասընթացը կամ ավարտել են ընդամենը մեկ

դասընթաց, հետագայում գրկվում էին *Ճեմարանում* անվճար ուսուցում ստանալու իրավունքից: Կանոնակարգի 7-րդ կետը սահմանում էր նաև, որ այս և այլ նմանատիպ պատճառներով ուսումը ընդհատած սովորողների ծնողները պետք է պարտավորագիր գրեին նաև այն մասին, որ ճեմարանի ամբողջական դասընթացը չավարտելու պարագայում պարտավորվում էին սեփական միջոցների հաշվին լուծել հետդարձի ճանապարհաձախարհ: Կանոնագրքում հավելյալ պարտավորություն էր նախատեսվում ճեմարանի հոգևոր բաժնի ունկնդիրների համար. ծնողները պարտավորվում էին հետագայում չդիմել ճեմարանի ղեկավարությանը իրենց զավակներին հայկական եկեղեցիներում ծառայության անցնելու խնդրանքով:

Անկասկած, Լազարյան ճեմարանի անվճար ուսուցման համակարգ ընդունվելու համար սահմանված կանոնները արդարացի էին և նպաստավոր պայմաններ էին ստեղծում հիմնավոր և խոր գիտելիքներ ստանալու համար: Կանոնագիրքը հստակ պատասխանում է նաև այն հարցին, թե որտեղ էր թաքնված Լազարյան ճեմարանում ստացած խոր գիտելիքների գաղտնիքը: Պակաս կարևոր չէր նաև կանոնագրքում սոցիալական դրության շեշտադրումը: Այդ տեսակետից, կարծում ենք, որ դրանում տեղ գտած շատ դրույթներ օգտակար և կիրառելի կլինեն ներկայիս մեր կրթական հաստատությունների անվճար ուսուցման համակարգի համար. ի վերջո՝ կրթական բնագավառում կարևորը ոչ միայն գիտելիքներ հաղորդելն է, այլև այդ գիտելիքների յուրացումը և կրթության սոցիալական բաղադրիչի ապահովումը:

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՆՈՆՔ
ՎԱՍՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՅ ՁՐԻԱՎԱՐԺ ՈՐԴԵԳԻՐՔԸ
Ի ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

ԿԱՆՈՆՔ

Վասն ընդունելոյ Լազարեան ձրիավարժ որդեգիրքը, Հոգևորական և Նախակրթական բաժինների աշակերտքը:

Կառավարութիւնն Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց հարկաւոր է համարում հասուցանել ՚ի գիտութիւն Ռուսաստանի մէջ բնակուող հայոց, որք ցանկան իւրեանց որդիքը կամ ազգականքը տեղաւորել ՚ի թիւս, ա. Լազարեանց ձրիավարժ որդեգրաց, բ. Հոգևորական, և գ. Նախակրթական բաժինների աշակերտաց, թէ՛ այսուհետև ուրիշ կերպով չեն կարող մանկունք ընդունիլ ՚ի յիշատակեալ կարգս ձրիավարժ աշակերտաց, բայց միայն՝ պահպանելով հետագայ պայմանքը և կանոնքը, որք են.

Ա. Խնդիր տալոյ ժամանակին վասն ընդունելոյ ՚ի թիւս այնպիսի աշակերտաց՝ պարտական է յարակցել վկայական թուղթքը վասն ծննդեան և մկրտութեան, վասն պատուաստի ծաղկի, վասն կոչման ծնողաց, և վասն չքաւորութեան. Իսկ հարկատու անձինք՝ բաց յայսմանէ պարտական են առաջի առնել վկայական թուղթքը արձակման յիւրեանց հասարակութեանց:

Բ. ՚Ի Ճեմարան մտանողաց ի սկզբան անդ ուսումնական տարւոյն պահանջուում են հետևեալ տեղեկութիւնքն.

Վասն մտանելոյ յառաջին դասատուն. ՚ի Կրօնական ուսմանց՝ կանոնադոյն աղօթքներ, Հանգանակ Հաւատոյ, և տասնաբերայ պատու իրեանք Աստուծոյ: Կարդալ և գրել Հայերէն, Ռուսերէն և Գաղղիաերէն: Չորս առաջին կանոնկք թուարանութեան (четыре первые действия арифметики):

Վասն մտանելոյ յերրորդ դասատուն. ՚ի Կրօնական ուսմանց՝ Համառօտ Քրիստոնէական վարդապետութիւն: ՚Ի Հայոց լեզուէ՝ գլխաւոր ձևքն փոփոխական մասանց բանի, ձևք հոլովմանց անուանց և դերանուանց, և խոնարհմանց կանոնաւոր բայից: ՚Ի Ռուսաց լեզուէ՝ Քերականութեան սկզբունք: ՚Ի Գաղղիական լեզուէ՝ Ձևք խոնարհմանց (բայից), ՚ի Թուարանութենէ՝ այն կանոնքն՝ որ կոչուում են Именнованные числа, простые и десятичный дробь. Յաշխարհագրութենէ՝ Ընդհանուր տեսութիւն (Общий обзор).

Վասն մտանելոյ յերրորդ դասատուն, ՚ի Կրօնական ուսմանց՝ Սրբազան Պատմութիւն Աւետարանի: ՚Ի Հայոց լեզուէ՝ առաջին մասն քերականութեան: - ՚Ի Ռուսաց լեզուէ՝ առաջին մասն քերականութեան: ՚Ի Գաղղիական լեզուէ՝ առաջին մասն քերականութեան, գլխավոր կանոնք Համաձայ-

նութեան, թարգմանութիւն դիրքիմաց հատուածոց: - Ի Մատենատիկայէ՝ ամբողջ թուաբանութիւն: Համառօտ ընդհանուր Պատմութիւն:

Վասն մտանելոյ՝ ՚ի չորրորդ դասատուն. ՚ի Կրօնական ուսմանց՝ Առակախօսութիւնք Քրիստոսի, և Պատմութիւն Նահապետաց, Մարգարէից, Առաքելոց և այլոց երևելի անձնաց, քաղեալք ՚ի Հին և Նոր Կտակարանաց: Ի Հայոց լեզուէ՝ Համաձայնութիւն: Ի Ռուսաց լեզուէ՝ Համաձայնութիւն: Ի Գաղղիական լեզուէ՝ մանրամասն տեղեկութիւն Համաձայնութեան: Թարգմանութիւն ՚ի Գաղղիական լեզուէ՝ ՚ի Ռուս: Ի Մատենատիկայէ՝ մանրամասն տեղեկութիւն զթուաբանութենէ (Подробное знание арифметики). Յերկրաչափութենէ (из геометрии) մինչ ցայն մասնը՝ որ կոչուում է Пропорциональные линии. Ընդհանուր պատմութիւն, Ռուսաց պատմութիւն համառօտ: Աշխարհագրութիւն Եւրոպիոյ.

Ծանօթ. Վերոյիշեալ տեղեկութիւնքն չեն պահանջուում յայն աշակերտաց, որք ցանկան մտանելու ՚ի Նախակրթական բաժինը, որոյ մէջ ընդունուում են մանկունք յ8 տարեկանէն մինչ ց10 տարեկան, առանց հարցաքննութեան:

Դասական մատեանք.

Ա. Կրօնական ուսմանց. Հաւատապատում՝ Մ. Սսերյանց: Քրիստոսապատում՝ նոյն հեղինակի: Առակառօսութիւնք Քրիստոսի ՚ի Քրիստոսապատում՝ տետրակէն. Նոյն հեղինակի: Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ. Նոյն հեղինակի:

Բ. Հայոց լեզուի. Քերականութիւն Հայկական լեզուէ: Մ. Էմին

Գ. Ռուսաց լեզուի. Смирнова. Учебник русского языка, курс первый: Վասն առաջին դասատան, курс второй վասն երկրորդ դասատան, և վասն երրորդ դասատան Практическая русская грамматика, часть III.

Դ. Մատենատիկայի. Վասն առաջին դասատան Руководство к арифметике Буссе, часть I; վասն երկրորդ դասատան того же руководства часть II; վասն երրորդ դասատան Перовщикова. Гимназический курс чистой Математики, часть III, Геометрия.

Ե. Աշխարհագրութեան. Ободовский. Всеобщая география; учебная книга.

Զ. Պատմութեան. Վասն երկրորդ դասատան՝ Берте. Всеобщая история в рассказах для детей; վասն երրորդ դասատան՝ Руководство к первоначальному изучению Русской истории Устрялова.

Է. Գաղղիական լեզուի. Վասն առաջին և երկրորդ դասատանց՝ Firmin. Le guide de l'enfance ou cours pratique de la langue française à l'usage des commerçants; վասն երրորդ դասատան՝ Noël et Chapsal, abrégé de la grammaire française.

Ը. Միայն այն հայազգի մանկունքն կարող են ընդունուիլ ՚ի վերոյիշեալ յերիս կարգս ձրիավարժ աշակերտաց ճեմարանի. որք պատրաստուած են համաձայն վերոյգրեալ ցուցակի: Վասն հաստատապէս հասանելոյ այս նպատակիս՝ Կառավարութիւնն ճեմարանի դիմում է այսու առ տեղական ուսումնարանս Հայոց, որք գտնուում են ՚ի Տիփլիս, յԵրևան, յԷջմիածին, ՚ի

Նոր նախիջևան, ՚ի Թեոդոսիա, յԱստրախան և յայլ քաղաքս, խնդրելով, որ քննեն համաձայն Ճեմարանի ցուցակին զկոչուած աշակերտացուքը (կանդիդատքը) ՚ի մասին ունելոյ նոցա ըստ բաւականին այն հմտութիւնքը, որք պահանջըւում են վասն մտանելոյ չորս դասատանց միոյն մէջ: Վասն որոյ

Դ. Ծնողք այն կանդիդատից՝ որք պիտի հաշուին ՚ի թիւս ձրիավարժ որդեգրաց, պարտական են, յետ ստանալոյ գրաւոր վճռագիրը ՚ի Կառավարութենէ Ճեմարանի, յառաջ քան զուղևորիլը զնոյն կանդիդատ ՚ի Մոսկվա, ներկայացուցանել զնոսա ՚ի նախաքննութիւն յիշեալ ուսումնարանաց մէջ, և չուղարկել զնոսա ՚ի Ճեմարան քանի որ չեն ստացած յուսումնարանաց այն բաւարար վկայութիւնքը, զորս պարտական են նոքա առաջի առնել Ճեմարանի Կառավարութեան յետ հասանելոյ ՚ի Մոսկվա: Առանց այս վկայականաց ո՛չ որ իրաւունք մտանելու ՚ի թիւս ձրիավարժ որդեգրաց Ճեմարանի:

Ե. Կոչուած կանդիդատքն ՚ի հաշիւ ձրիավարժ որդեգրաց յիշեալ երից կարգաց, յետ հասանելոյ ՚ի Մոսկվա, ուրիշ կերպիւ չեն կարող ընդունիլ ՚ի Ճեմարան, եթէ ո՛չ երաշխաւորութեամբ Մոսկվայի մէջ գտանուող անձին, այսինքն՝ ազգականի կամ բարեկամի, որ գրով կը պարտաւորուի ընդունիլ նմա արձակուիլ ՚ի Ճեմարանի վասն օրինաւոր պատճառաց յառաջ քան զաւարտելն զուսման ընթացքը:

Զ. Որպէս ձրիավարժ աշակերտաց՝ թէ նոքա, որք կարձակուին ՚ի Ճեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման ընթացքը, և թէ նոքա, որք կաւարտեն զուսման ընթացքը, ո՛չ ինչ դրամական օգնութիւն ստանալու չեն վասն վերադառնալոյ ՚ի հայրենիս: Եւ այսու պատճառաւ:

Է. Երբ որ կը մտանեն նոքա ՚ի Ճեմարան, նոցա ծնողքն կամ ազգականքն պարտական են միւս վկայականաց հետ ՚ի միասին առաջի առնել նոյնպէս գրաւոր պարտաւանդութիւն, որ եթէ պատահի իւերանց որդոց կամ ազգականաց արձակուիլ ՚ի Ճեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման ընթացքը կամ յետ այնորիկ՝ վասն որպիսի և իցէ՝ պատճառաց, ինքեանք ծնողքն կամ ազգականքն՝ ունին իւերանց վերայ առնուլ զճանապարհական ծախքը, իսկ՝ որք կըրցանկան զիւրեանց որդիքը կամ ազգականքը, տալ ՚ի շարս աշակերտաց Հոգևորական Բաժնի, նոքա՝ բաց յայնմանէ, պարտական են առաջի գրաւոր պարտաւանդութիւն, թէ ինքեանք երբէք անհանգիստ առնելու չեն զՃեմարանի կառավարութիւնը խնդիրներով վասն ազատ կացուցանելոյ զիւրեանց որդիքը կամ ազգականքը ՚ի ծառայելոյ Հայոց եկեղեցիներում, հոգևոր դպրոցներում և Առաջնորդական ատեաններում:

Ը. ՚Ի շարս ձրիավարժ Լազարեան որդեգրաց ընդունուում են առաւելապէս չքաւոր **Հայ ազնուականաց** որդիքն:

Москва, 1860.- в типографии лазаревского института восточ. язык.

Айказ Оганесян – *Заслуживающий внимания документ из архива Лазаревых*

В архиве Лазаревых (фонд 108, дело 96, хранящееся в Матенадаране имени Месропа Маштоца) наше внимание привлекла книжка, помещенная в этом деле. Она была напечатана на армянском и русском языках и называлась «Правила о приеме бесплатных воспитанников в Лазаревский институт восточных языков». В статье анализируются правила и условия приема на бесплатное обучение Лазаревского института, констатируется, что эти правила не только были справедливы в своей основе, но и создавали благоприятные условия для основательного обучения и приобретения глубоких знаний в Лазаревском институте. В статье также дается ответ на вопрос о том, в чем заключается секрет глубоких знаний в Лазаревском институте. Не менее важным было также акцентирование социального положения учащихся.

Haykaz Hovhannisyan – *A Notable Document from the Lazarev Archive*

Our attention was attracted by a book found in the Lazarev archive (fund 108, case 96), which is kept in the Matenadaran after Mesrop Mashtots. It was printed in the Armenian and Russian languages and is called “Rules for the Free Admission of Pupils to the Lazarev Institute of Oriental Languages”. The article analyzes the rules and regulations for the admission to the free-of-charge education in the Lazarev Institute; it is stated that these rules were not only fair in their basis, but also created favorable conditions for a thorough education and for gaining a profound knowledge in the Lazarev Institute. The article also reveals the secret of gaining a profound knowledge in the Lazarev Institute. Equally important was also the emphasis on the social status of students.